Քաղուածք

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի)
2-րդ գումարման 1-ին նստաշրջանի նախապատրաստական նիստի արձանագրութիւնից

Նախապատրաստական նիստ
26 սեպտեմբեր, 2018 թ.,
ժամը 16:00 մինչեւ 19:00

1. Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման ընտրուած 101 պատգամաւորներից գրանցուել են 91 պատգամաւոր, 59-ը դահլիճում եւ 32-ը ինտերնետ կապով, որը կազմում է 95 տոկոս:
Քուորումն ապահովուած է:

2. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի կազմակերպման ուղղութեամբ կատարուած աշխատանքների վերաբերեալ:
Որոշեցին՝ դրական գնահատել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի կազմակերպման ուղղութեամբ կատարուած աշխատանքները:
Քուէարկութեան արդիւնքները.
Կողմ - 91, դէմ - 0, ձեռնպահ – 0
Որոշումն ընդունուած է միաձայն:

3. Լսեցին՝ Առաջարկութիւններ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական յանձնաժողովների վերաբերեալ:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական յանձնաժողովների հետեւեալ ցանկը.
1. Իրաւական, օրէնսդրական եւ պետական հարցերի մշտական յանձնաժողով:
2. Պաշտպանութեան, ներքին գործերի եւ ազգային անվտանգութեան հարցերի մշտական յանձնաժողով:
3. Միջազգային յարաբերութիւնների եւ միջխորհրդարանական կապերի մշտական յանձնաժողով:
4. Հայրենակցական, համայնքային եւ հայրենասիրական հասարակական միութիւնների մշտական յանձնաժողով:
5. Ֆինանսական եւ տնտեսական հարցերի մշտական յանձնաժողով:
6. Կրթութեան եւ գիտութեան հարցերի մշտական յանձնաժողով:
7. Մշակոյթի հարցերի մշտական յանձնաժողով:
8. Ընտանիքի, կանանց եւ առողջապահութեան հարցերի մշտական յանձնաժողով:
9. Երիտասարդութեան եւ սպորտի հարցերի մշտական յանձնաժողով:
10. Լրատուութեան հարցերի մշտական յանձնաժողով:

11. Հոգեւոր ոլորտի եւ կրօնի հարցերի մշտական յանձնաժողով:
12. Բնիկ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնութիւնների հարցերի մշտական յանձնաժողով:
13. Հայոց ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հատուցման հարցերի մշտական յանձնաժողով:
14. Վետերանների եւ սոցիալական հարցերի մշտական յանձնաժողով:
15. Ներքին կանոնակարգի եւ աշխատակարգի մշտական յանձնաժողով:
Քուէարկութեան արդիւնքները.
Կողմ - 91, դէմ - 0, ձեռնպահ – 0
Որոշումն ընդունուած է միաձայն:

4. Լսեցին՝ Քննարկումներ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական յանձնաժողովների անդամների եւ նախագահների, Խորհրդարանի նախագահի, տեղակալների եւ քարտուղարների, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի թեկնածուների վերաբերեալ:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Մշտական յանձնաժողովների անդամների եւ նախագահների, Խորհրդարանի նախագահի, տեղակալների եւ քարտուղարների, Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան նախագահի թեկնածուների վերաբերեալ առաջարկները: (Թեկնածուների ցուցակը կցւում է)
Քուէարկութեան արդիւնքները.
Կողմ - 91, դէմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունուած է միաձայն:

5. Լսեցին՝ Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի օրակարգի նախագծի վերաբերեալ:
Որոշեցին՝ Հաստատել Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանի օրակարգի նախագիծը:
Քուէարկութեան արդիւնքները.
Կողմ - 91, դէմ - 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունուած է միաձայն:

Արմէն Տէր-Սարգսեան
Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանայ Գրիգորեան
Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար